Կարգապահական գործ թիվ ԿԳ-20183

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021 թվականի փետրվարի 02-ի թիվ 156-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/61-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԵՎԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի և Արմեն Ֆերոյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Արևիկ Եղիազարյանին (արտոնագիր թիվ 1417) (**այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Փաստաբան Էդգար Արմենի Հակոբյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է հետևյալը.

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում թիվ ԵԱԴԴ/2779/02/17 գործն ըստ հայցի Նաիրա Հայրապետյանի ընդդեմ Համլետ Հայրապետյանի՝ ամուսնալուծության, ալիմենտ բռնագանձելու և երեխաների բնակության վայրը մոր բնակության վայրով որոշելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի՝ Համլետ Հայրապետյանի ընդդեմ Նաիրա Հայրապետյանի՝ երեխայի բնակության վայրը հոր բնակության վայրով որոշելու և տեսակցության կարգ սահմանելու պահանջների մասին:

Թիվ ԵԱԴԴ/2779/02/17 քաղաքացիական գործով սկզբնական հայցով հայցվոր և հակընդեմ հայցով պատասխանող Նաիրա Հայրապետյանի շահերը դատարանում ներկայացնում է փաստաբան Արևիկ Եղիազարյանը **(այսուհետ՝ Փաստաբան):** Ըստ Դիմողի նշված քաղաքացիական գործով 11.09.2020թ. նշանակված դատական նիստին Փաստաբանը, դիմելով Էդգար Հակոբյանին, ասել է՝ «***<u>Ինչ ես ծիծաղում, ոտից գլուխ ծիծաղի առարկա ես»</u>***:

Դիմողի պնդմամբ Արևիկ Եղիազարյանը վիրավորել է իր՝ որպես փաստաբանի պատիվն ու արժանապատվությունը և դրանով իսկ խախտել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները:

Դիմողը խնդրել է փաստաբան Արևիկ Եղիազարյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և քննարկել վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 15.10.2020թ. թիվ 365-Ա/ԿԳ-20183 որոշման հիման վրա փաստաբան Արևիկ Եղիազարյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 (1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

16.10.2020թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Նարինե Սարգսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Պալատի խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել կարգապահական նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.2. <u>Փաստաբանի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբանը ներկայացրել է բացատրություն հայտնելով հետևյալը՝ 11.09.2020թ-ին կայացած դատական նիստի ընթացքում դատարանը հայտնել է, որ Փաստաբանի լիազորագրի ժամկետը լրացել է և ասել է՝ եթե կարող եք, ներկայացրեք նոր լիազորագիր: Փաստաբանը դատարանին տեղեկացրել է, որ տվյալ պահին չի կարող ներկայացնել լիազորագիր և խնդրել է տալ նման հնարավորություն: Դիմողը չի առարկել, որ հնարավորություն տրվի Փաստաբանին լիազորագիր ներկայացնել, սակայն խնդրել է դրա համար նիստը չհետաձգել, և, քանի որ Փաստաբանի վստահորդը նիստերի դահլիճում է, հայտարարել ընդմիջում, որպեսզի այդ ընթացքում դատարանում լիազորագիր կազմվի: Դրանից հետո Փաստաբանն ասել է, որ նիստը հետաձգելու կամ ընդմիջում հայտարարելու որոշումը թողնում է դատարանի հայեցողությանը: Շարունակելով՝ Փաստաբանը Դիմողին ասել է. «Դուք գոնե ժամկետներից մի խոսեք, Դուք դրա իրավունքը չունեք»: Իր դիրքորոշումը հայտնելու ժամանակ Փաստաբանը նկատել է, որ Դիմողն իր հայտարարություններին զուգահեռ թույլ է տվել առանձնահատուկ նկատելի վիրավորական ծիծաղ, քմծիծաղ, դրանով իսկ դրսևորելով վիրավորական և անհարգալից վարքագիծ իր անձի նկատմամբ: Նկատելով նման վիրավորական

վարքագիծ՝ Փաստաբանը պատասխանել է հետևյալ կերպ. «Ասածիս մեջ ծիծաղելու ոչինչ չկար, ոտից գլուխ ծիծաղի առարկա ես»:

Պալատի խորհրդի նիստին Պատասխանողը ներկայացել և ըստ էության հաստատել է նախկինում իր կողմից ներկայացված դիրքորոշումը:

3.3 Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 15.12.2020թ. կազմել է եզրակացություն:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 02.02.2021թ., ժամը 19:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

***Խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը,* հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

- ԵԱԴԴ/2779/02/17 քաղաքացիական գործի շրջանակներում Դիմողը և Փաստաբանը ներկայացրել են իրենց վստահորդների, համապատասխանաբար՝ հայցվոր և պատասխանող կողմերի շահերը: Սույն փաստը հաստատված է համարվում նիստի ձայնագրությունների էլեկտրոնային կրիչով, ինչպես նաև Դիմողի և Պատասխանողի բացատրություններով:

11.09.2020թ. դատական նիստի ժամանակ Արևիկ Եղիազարյանը Էդգար Հակոբյանին ասել է հետևյալը. «***Ինչ ես ծիծաղում, ոտից գլուխ ծիծաղի առարկա ես»***: Սույն փաստը հաստատված է համարվում նիստի ձայնագրությունները պարունակող էլեկտրոնային կրիչով, Դիմողի և Պատասխանողի բացատրություններով, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք չեն վիճարկվել Փաստաբանի կողմից:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արևիկ Եղիազարյանի նկատմամբ 2017-2021թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել, բացառությամբ սույն կարգապահական վարույթի:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Փաստաբան Արևիկ Եղիազարյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերի պահանջների խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է՝ պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 5.1.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:*

Կանոնագրքի 5.2.1 (1) ենթակետի համաձայն՝ *փաստաբանը չպետք է՝ (1) թույլ տա այլ փաստաբանի պատիվը, արժանապատվությունը կամ համբավն արատավորող գործողություններ կամ արտահայտություններ:*

Կանոնագիրքը հստակ սահմանել է փաստաբանների միջև շփման նվազագույն կանոնները, այն է՝ լինել քաղաքավարի և դրսևորել հարգալից վերաբերմունք միմյանց արժանապատվության և համբավի նկատմամբ:

Փաստաբանների, այդ թվում դատավարական հակառակորդ կողմերի շահերը ներկայացնող փաստաբանների կողմից մեկը մյուսի նկատմամբ հարգալից վերաբերմունքի դրսևորումը ուղղակիորեն առնչվում է փաստաբանության ինստիտուտի հեղինակության և փաստաբանի դերի հասարակական ընկալման հետ:

Այլ փաստաբանի նկատմամբ քաղաքավարի վերաբերմունքը և հարգանքը պետք է լինի յուրաքանչյուր փաստաբանին ուղղորդող կանոն և այն նվազագույն պահանջը, որը կիրառելի է փաստաբանների միջև հարաբերություններում և փաստաբանական էթիկայի հիմնաքարն է:

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ մեկնաբանությունների «դ» կետի համաձայն՝ *Փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե*

փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը:

Խորհուրդը գտնում է, որ Կանոնագրքի մեջբերված դրույթները բովանդակային առումով փոխկապակցված են, և փաստաբանի կողմից Կանոնագրքի 5.2.1 ենթակետի խախտումը, որպես կանոն, հանգեցնում է նաև 5.1.2 ենթակետի պահանջի խախտման:

Քննարկելով Փաստաբանի վարքագիծը վերը նշված համատեքստում՝ Խորհուրդն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին.

1. Արդյո՞ք Պատասխանողի կողմից Դիմողին ուղղված արտահայտությունները կատարվել են այնպիսի պայմաններում, երբ նրանք երկուսն էլ հանդես էին գալիս որպես փաստաբաններ, այսինքն իրականացնում էին իրենց կարգավիճակից բխող գործառույթներ և գործողություններ.

2. Արդյո՞ք Պատասխանողի կողմից Դիմողին հասցեագրված արտահայտություններն արատավորում են Դիմողի՝ որպես փաստաբանի պատիվը, արժանապատվությունն ու համբավը:

Պատասխանելով վերը թվարկված առաջին հարցադրմանը՝ Խորհուրդն արձանագրում է, որ սույն պարագայում Դիմողի և Պատասխանողի միջև իրավական վեճը բխում է նրանց՝ որպես փաստաբանների կարգավիճակով պայմանավորված գործողություններից: Մասնավորապես, թիվ ԵԱԴԴ/2779/02/17 քաղաքացիական գործով Նաիրա Հայրապետյանի շահերը դատարանում ներկայացնում է փաստաբան Արևիկ Եղիազարյանը, իսկ Համլետ Հայրապետյանի շահերը դատարանում ներկայացնում է Էդգար Հակոբյանը, հետևաբար Պատասխանողի կողմից Դիմողի հասցեին խնդրո առարկա արտահայտությունն անելիս նրանք երկուսն էլ հանդես են եկել փաստաբանի կարգավիճակում, դատական նիստերի դահլիճում՝ դռնբաց դատական նիստում: Այս փաստերը համարվում են հաստատված նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ կողմերն ընդունել են դրանք:

Ինչ վերաբերում է երկրորդ հարցադրմանը՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործի շրջանակներում հաստատվել է, որ Փաստաբանը, դիմելով Պատասխանողին, ասել է հետևյալը. «***<u>Ինչ ես ծիծաղում, ոտից գլուխ ծիծաղի առարկա ես»</u>***, ինչը որևէ կերպ չի կարող ներառվել «հարգալից վերաբերմունք» պահանջի շրջանակներում: Ավելին՝ նշված արտահայտությունն ակնհայտ վիրավորանք է պարունակում ուղղված անձի արժանապատվությանը, քանի որ փաստաբանին դիտարկում է, որպես «ոտից գլուխ ծիծաղի առարկա»:

Նշված արտահայտությունը, Խորհրդի գնահատմամբ, հանդիսանում է փաստաբանի պատիվը, արժանապատվությունն ու համբավը արատավորող, և ընդունելի չէ փոխադարձ հարգանքի վրա կառուցված հարաբերություններում:

Ինչ վերաբերում է Պատասխանողի այն փաստարկին, որ իր դիրքորոշումը հայտնելու ժամանակ նկատել է, որ Դիմողն իր հայտարարություններին զուգահեռ թույլ է տվել առանձնահատուկ նկատելի վիրավորական ծիծաղ, քմծիծաղ, դրանով իսկ դրսևորելով վիրավորական և անհարգալից վարքագիծ իր անձի նկատմամբ,

այդ իսկ պատճառով էլ ինքը կատարել է վերը նշված արտահայտությունը, ապա սույն գործի շրջանակներում չի քննարկվում Դիմողի կողմից թույլ տրված այս կամ այն վարքագիծը:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ արձանագրվում է, որ Փաստաբանի վարքագծում առկա է Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերի խախտում:

Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների

4) տուգանք

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Արևիկ Եղիազարյանի անձը բնութագրող հանգամանքները:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արևիկ Եղիազարյանին (արտոնագիր թիվ 1417) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին օրենքի» 19-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Արևիկ Եղիազարյանի նկատմամբ կիրառել (նշանակել) կարգապահական տույժ՝ նկատողություն:

3.Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյան

02 փետրվար 2021թ.
թիվ ԿԳ/61-Ա
ք. Երևան